

**ՀՀ ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵ
ՀԱՐԿԱՅԻՆ ԵՎ ՄԱՔՍԱՅԻՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

ՈՐՈՇՈՒՄ N 36/9

ք.Երևան

26 հունիսի 2018թ.

Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտեի հարկային և մաքսային մարմինների բողոքարկման հանձնաժողովը (այսուհետ նաև՝ Հանձնաժողով), քննության առնելով ՀՀ տեսչական մարմինների միասնական բողոքարկման հանձնաժողովի 06.04.2018թ. «ԱՊԱԳԱ ՏՈՒՐ» ՍՊԸ 13.03.2018թ. վարչական բողոքը մասնակի բավարարելու մասին N 05/04 որոշման պահանջները կատարելու հարցը՝ կապված նոր բարենպաստ վարչական ակտ կայացնելու հետ

ՊԱՐԶԵՑ

Հանձնաժողովի 26.12.2017թ. նիստում քննության է առնվել «ԱՊԱԳԱ ՏՈՒՐ» ՍՊԸ (այսուհետ նաև՝ ընկերություն) գանգատը ՀՀ ԿԱ ՊԵԿ Ստուգումների կազմակերպման և դիտարկման վարչության 23.09.2017թ. N 1012548 ակտի դեմ: Արդյունքում ընդունվել է 69/1 որոշումը, որի համաձայն ՀՀ ԿԱ ՊԵԿ Ստուգումների կազմակերպման և դիտարկման վարչության 23.09.2017թ. N 1012548 ակտը թողնվել է անփոփոխ, իսկ գանգատը՝ մերժվել:

Ընկերությունը համաձայն չլինելով Հանձնաժողովի 26.12.2017թ. թիվ 69/1 որոշման հետ, այն բողոքարկել է ՀՀ տեսչական մարմինների միասնական բողոքարկման հանձնաժողով:

Հանձնաժողովի 26.12.2017թ. թիվ 69/1 որոշման դեմ «ԱՊԱԳԱ ՏՈՒՐ» ՍՊԸ-ի կողմից բերված բողոքի քննության արդյունքում ՀՀ տեսչական մարմինների միասնական բողոքարկման հանձնաժողովի կողմից 06.04.2018թ. կայացվել է N05/04 որոշումը, որի համաձայն «ԱՊԱԳԱ ՏՈՒՐ» ՍՊԸ-ի 13.03.2018թ. վարչական բողոքը բավարարվել է մասնակի. շահութահարկի մասով բեկանվել է Հանձնաժողովի 26.12.2017թ. թիվ 69/1 որոշումը և ՀՀ ԿԱ ՊԵԿ-ին հանձնարարվել է կայացնելու նոր բարենպաստ վարչական ակտ, իսկ ավելացված արժեքի հարկի մասով բողոքը մերժվել է:

Հիմք ընդունելով ՀՀ տեսչական մարմինների միասնական բողոքարկման հանձնաժողովի 06.04.2018թ. N05/04 որոշմամբ արտահայտված դիրքորոշումը և ղեկավարվելով ՀՀ Հարկային օրենսգրքի 443-րդ հոդվածի, «Մաքսային ծառայության մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի պահանջներով Հանձնաժողովը

ՈՐՈՇՈՒՄ Է՝

Անվավեր ճանաչել ՀՀ ԿԱ ՊԵԿ Ստուգումների կազմակերպման և դիտարկման վարչության 23.09.2017թ. N 1012548 ակտի 1-ին կետը:

Հանձնաժողովի նախագահ՝



Ռ.ՄԱՇԱԴՅԱՆ